Դեռահասների առողջությունը. Դեղատոմսային դեղերի չարաշահումը

Լավ կլինի, եթե ծնողներն իրենց երեխաների հետ խոսեն դեղատոմսային դեղերի չարաշահման հետ կապված վտանգների մասին: Դեղատոմսային դեղերն այն դեղերն են, որոնք տրվում են բժշկի կողմից: Դեռահասները դեղատոմսային դեղերն ավելի շատ են չարաշահում, քան թմրադեղերի մեծ մասը: Դեռահասները հաճախ դեղատոմսային դեղերը ձեռք են գցում իրենց ընտանիքի անդամներից կամ ընկերներից՝ նրանց գիտությամբ կամ առանց դրա: Նրանք կարծում են, թե այդ դեղերն անվտանգ են, քանի որ բժշկական կիրառություն ունեն: Դեռահասները կարող են կարծել, թե այդ դեղերն օգնում են իրենց ավելի լավ զգալ, լավ շփվել, նիհարել կամ լավ սովորել:

Դեռահասների կողմից ամենից հաճախ չարաշահվող դեղերն են ցավամոքիչները (Vicodin, OxyContin, Percocet, Codeine), քնաբերները (Valium, Xanax, Ambien, Mebaral, Nembutal) և խթանիչները (Ritalin, Adderall): «Կայֆ» ստանալու համար դեռահասները կարող են նաև առանց դեղատոմսի վաճառվող դեղեր օգտագործել, օրինակ՝ հազի թուրմ և մրսածության հաբեր:

Վտանգները

Դեղատոմսային դեղերը կարող են նույնքան կախվածություն առաջացնել և վնաս հասցնել, որքան թմրադեղերը: Մեծ քանակությամբ՝ դրանք կարող են դանդաղեցնել շնչառությունը և ազդել սրտի զարկերի հաճախականության վրա: Խիստ մեծ քանակությամբ օգտագործվելու կամ այլ դեղերի կամ թմրադեղերի հետ խառնելու դեպքում, դրանք կարող են մահացու լինել:

Կանխումը. մասնակցեք Ձեր երեխայի կյանքին

→ Ձեր երեխայի հետ խոսեք դեղերի պարունակած վտանգների մասին:

→ Օգնեք Ձեր երեխային գերհույզի (սթրեսի) դեմ պայքարելու առողջ եղանակներ գտնել:

→ Ծանոթ եղեք այն նշաններին, որոնք ցույց են տալիս, որ Ձեր անչափահաս երեխան կարող է դեղեր ընդունած լինել: Օրինակ՝ երեխան անտարբեր է դարձել ընկերների և սովորական ժամանցների նկատմամբ: Հնարավոր է նաև, որ փոփոխություններ նկատեք նրա արտաքին տեսքի, առաջադիմության, ուտելու կամ քնելու սովորությունների մեջ:

Մատչելի տեղում մի դրեք հաբերը

→ Բոլոր դեղերը պահեք սառը, չոր տեղում՝ երեխաներից հեռու:

→ Պահեք Ձեր ունեցած հաբերի հաշիվը: Դեն նետեք հին կամ չօգտագործված հաբերը:

→ Խոսեք ընտանիքի անդամների, բարեկամների և այլոց հետ այն մասին, թե որտեղ պահեք դեղերը, որ դրանք անմատչելի լինեն երեխայի համար:

Ի՞նչ կարող եք Դուք անել, եթե կարծում եք, որ Ձեր անչափահաս երեխան չարաշահում է դեղատոմսային դեղերը

→ Խոսեք երեխայի հետ, երբ նա դեղերի ազդեցության տակ չէ, և երբ ինքներդ բարկացած չեք:

→ Օգնություն ստացեք Ձեր երեխայի բժշկից կամ դպրոցական խորհրդատուից:

→ Ավելի շատ տեղեկություններ ձեռք բերեք դեղերի չարաշահման մասին: Զանգահարեք Թմրադեղերի չարաշահման և հոգեբուժական ծառայությունների վարչություն՝ 1-800-662-4357 հեռախոսահամարով:

Եթե հարցեր կամ մտահոգություններ ունեք այն կապակցությամբ, թե արդյոք Ձեր երեխայի ապահովագրությունը կվճարի թմրադեղերի չարաշահումից ստացած բուժման համար, խնդրում ենք զանգահարել Ձեր երեխայի առողջապահական ծրագիր:

Հեղինակային իրավունքը՝ © գրանցված է 2009 թ. «L.A. Care Health Plan» առողջապահական ծրագրի կողմից: Կազմված է «L.A. Care Health Plan» առողջապահական ծրագրի կողմից՝ մեզ հետ համագործակցող պայմանագիր առողջապահական ծրագրերի՝ «Anthem Blue Cross»-ի, «Care1st Health Plan» առողջապահական ծրագրի, «Community Health Plan» առողջապահական ծրագրի և «Kaiser Permanente»-ի հետ համատեղ: Միասին մենք «Medi-Cal»-ի կառավարվող բուժսպասարկման ծառայություններ ենք տրամադրում Լոս Անջելեսի շրջանում: **Prescription Drug Abuse (Armenian)** RHE544 (2/09)